Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.328

Rebuilding Borders: Artsakh's Protestant Communities in Armenia

Lilit Gabrielyan
https://orcid.org/0009-0000-6517-7921
PhD student at YSU
lilgabri868@gmail.com

Keywords: religion, Protestants, war, displacement, imaginary borders, miracle, community.

This article examines the impact of the forced displacement of Protestant Artsakh Armenians in 2023 on religious communities, focusing on the construction, destruction, and interactions of imagined religious boundaries within Armenian Protestant communities. Before the displacement of Artsakh, Protestant communities had clearly defined religious, social and economic boundaries in Nagorno-Karabakh, with long-established religious structures and communal social ties. The study shows how displacement leads to the destruction of these borders and the formation of new, imaginary borders. The article also discusses the socio-cultural and psychological challenges that the Artsakh Armenians faced when crossing the Armenian border, the role of faith, the increased demand for miracles in times of danger, as well as the problems of reconfiguring cultural, linguistic and domestic borders in new social landscapes. The article was based on the magazines of the Armenian Evangelical Church and the whole Church of Christians of the Gospel faith (Pentecostals), publications on official websites, interviews conducted by me with pastors of these churches, church members and believers displaced from Artsakh.

Վերակառուցելով սահմանները.Արցախի բողոքական համայնքները Հայաստանում

Լիլիթ Գաբրիելյան
ԵՊՀ, ասպիրանտ

Հիմնաբառեր՝ կրոն, բողոքականներ, պատերազմ, տեղահանություն, երևակայական սահմաններ, հրաշք, բարեգործություն:

Սույն հոդվածն ուսումնասիրում է 2023 թվականին բողոքական արցախահայերի բռնի տեղահանման ազդեցությունը կրոնական համայնքների վրա՝ կենտրոնանալով հայ բողոքական

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 328-337.

Received: 24.09.2024
Revised: 05.10.2024
Accepted: 21.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

համայնքների ներսում երևակայական կրոնական սահմանների կառուցակցման, դրանց քանդման և փոխազդեցությունների վրա: Մինչ Արցախի տեղահանումը բողոքական համայնքներն ունեին հստակ սահմանված կրոնական, սոցիալական և տնտեսական սահմաններ Լեռնային Ղարաբաղում՝ վաղուց ձևավորված կրոնական կառույցներով ու համայնքային սոցիալական կապերով: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես է տեղահանումը հանգեցնում այս սահմանների ոչնչացմանը և նոր, երևակայական սահմանների ձևավորմանը: Հոդվածը քննարկում է նաև այն սոցիալ-մշակութային և հոգեբանական մարտահրավերները, որոնց բախվեցին արցախահայերը Հայաստանի սահմանը հատելիս, հավատքի դերը, հրաշքների պահանջարկի ավելացումը վտանգի ժամանակ, ինչպես նաև նոր սոցիալական լանդշաֆտներում մշակութային, լեզվական և հայրենակցական սահմանների վերակազմավորման խնդիրները: Հոդվածի համար հիմք են հանդիսացել Հայաստանյաց Ավետարանական եկեղեցու և Ավետարանի հավատքի քրիստոնյաների ամբողջ եկեղեցու (Հիսուսականներ) ամսագրերը, պաշտոնական կայքէջերի հրապարակումները, իմ կողմից իրականացված հարցազրույցներն այս եկեղեցիների հովիվների, եկեղեցու անդամների և Արցախից տեղահանված հավատացյալների հետ:

Восстановление границ: протестантские общины Арцаха в Армении

Лилит Габриелян
ЕГУ, Аспирант

Ключевые слова: религия, протестанты, война, перемещение, воображаемые границы, чудо, сообщество.

В данной статье рассматривается влияние насильственного переселения протестантских армян Арцаха в 2023 году на религиозные общины, уделяя особое внимание построению, разрушению и взаимодействию воображаемых религиозных границ внутри армянских протестантских общин. До перемещения Арцаха протестантские общины четко определили религиозные, социальные и экономические границы в Нагорном Карабахе, имея давно устоявшиеся религиозные структуры и общинные социальные связи. Исследование показывает, как вынужденное перемещение привело к разрушению этих границ и образованию новых, воображаемых границ. В статье также рассматриваются социокультурные и психологические проблемы, с которыми столкнулись арцахские армяне при пересечении армянской границы, роль веры, повышенный спрос на чудеса во времена опасности, а также проблемы реконфигурации культурных, языковых и отечественных границ в новых социальных ландшафтах. Статья основана на журналах Армянской Евангелической церкви и Объединенной церкви христиан-евангелистов (пятидесятников), публикаций на официальных сайтах, интервью, которые я провела с пасторами этих церквей, членами церкви и верующими, вынужденными покинуть Арцах.

* * *

Ներածություն: Բողոքականությունը պատմականորեն խորը արմատներ է ունեցել Արցախում: XIX դարում հայկական բողոքական եկեղեցիների հիմնումն Արցախում էապես

կապված էր շվեյցարական, գերմանական և բրիտանական բողոքական կազմակերպությունների միսիոներական գործունեության հետ: Ամենանշանավորը Բազելի միսիոներական ընկերությունն էր՝ Ավգուստ Դիտրիխի և Ֆելիցիան Զարեմբայի գլխավորությամբ, որոնք սկսեցին իրենց առաքելությունը 1820-ական թվականներին՝ հաստատվելով Շուշիում, որտեղ զբաղվում էին կրոնական ավետարանչականությամբ, կրթական նախաձեռնություններով և հրատարակչական գործունեությամբ. այս գործունեությունը էապես նպաստեց տեղի հայ բնակչության շրջանում բողոքականության տարածմանը [Ղուկազեանց, 1886, 8-25; Ղանալանյան, 2010, 40]: Շուտով վեճ է սկսվում Հայ Առաքելական եկեղեցու և բողոքական միսիոներների իրականացրած գործունեության վերաբերյալ, արդյունքում, ինչպես Բարբարա Մերգուրյանն է գրում իր «Բողոքական Արևմուտքի ազդեցությունը XIX դարի հայ լուսավորականության վրա» հոդվածում՝ 1835 թ. հրամանագրով Նիկոլայ ցարն արգելում է բողոքական առաքելությունների ցանկացած աշխատանք Հայ Եկեղեցում կամ նույնիսկ իր կայսրության մուսուլմանների շրջանում, որի արդյունքում Բազելի միսիան փակվում է [Merguerian, 2000, 228-229]: Բազելի միսիոներների հեռանալուց հետո, Արցախում բողոքական հայերի թիվը հասնում էր 100 ընտանիքի, սակայն առանձին եկեղեցի, որպես այդպիսին, գոյություն չուներ. եղած բողոքականները փորձում էին խմբային-հատվածային կազմակերպել իրենց կրոնական կյանքը: Դարի վերջերին ինչպես Ղանալանյանն է գրում՝ «1889 թ. Շուշիի հայ բողոքականները բաժանվեցին երկու խմբի՝ մկրտականներ և ավետարանականներ: 1890 թ. Շուշիում բացվեց առաջին հայկական մկրտական եկեղեցին: Արդեն 1890-ական թթ. ծավալուն դարձավ Արցախի հայ բողոքականների արտագաղթը դեպի Բաքու, ինչը նպաստեց Բաքվի հայ ավետարանական համայնքի հզորացմանը» [Ղանալանյան, 2012]: Կարևոր է ընդգծել, որ ինչպես նշում են ավետարանականները՝ ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, որտեղ բողոքականության տարածումը Առաքելական եկեղեցու միջից առանձնացված մի խումբ հոգևորականների կողմից իրականացված «բարեփոխիչ» գործունեության արդյունք էր, ապա Արևելյան Հայաստանում այն մեծապես տարածվեց օտարերկրյա միսիոներական առաքելությունների միջոցով: Արևելյան Հայաստանի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կրոնական լանդշաֆտի ձևավորումը XIX դարում զգալիորեն պայմանավորված էր Ցարական Ռուսաստանի կայսերական քաղաքականությամբ, որը ձգտում էր կառավարել տարբեր կրոնական և էթնիկ խմբերին կայսրության սահմանային գոտիներում [Անտոնյան 2023, 38]:

Խորհրդային տարիներին Արցախի հայ բողոքական համայնքները, ինչպես և ԽՍՀՄ-ի այլ վայրերում, բախվեցին դաժան բռնաճնշումների՝ պետության աթեիստական քաղաքականության պատճառով: Խորհրդային կառավարությունը խիստ միջոցներ ձեռնարկեց՝ ուղղված կրոնական գործունեությունը սահմանափակելուն և աթեիզմը խթանելուն, ինչը խստորեն ազդեց ավետարանական համայնքների գործունեության վրա [Ղազարյան Ա., Ռընե Լևոնյան, 1999, 185-199]: Բացի ավելի լայն հակակրոնական արշավներից, Արցախում հայ ավետարանականները ենթարկվեցին ազգային հալածանքների, քանի որ շրջանը գտնվում էր Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում [Ղանալանյան, 2012]: Ճնշման այս երկակի շերտը՝ կրոնական և ազգային, հանգեցրեց ավետարանական գործունեության զգալի անկման խորհրդային կառավարման ընթացքում:

Չնայած այս դժվարություններին, որոշ ընդհատակյա կրոնական խմբեր շարունակում էին գործել, սակայն կազմակերպված ավետարանական համայնք գոյություն չուներ: Ինչպես Կայզերն է գրում՝ պետական աթեիզմի և ազգային հալածանքների համադրությունը ստեղծեց մի միջավայր, որտեղ կրոնական արտահայտությունը խիստ սահմանափակված էր, արդյունքում՝ երբեմնի ակտիվ ավետարանական ներկայությունը տարածաշրջանում կտրուկ նվազեց [Kaiser, 2000, 89-91]:

Խորհրդային Միության փլուզումը և դրան հաջորդած աշխարհաքաղաքական փոփոխությունները Հարավային Կովկասում բերեցին կրոնական գործունեության վերածննդի, այդ թվում՝ Արցախի հայ բողոքական կրոնական ուղղությունների: Բողոքական կրոնական գործունեության վերածնունդը զուգահեռվեց ավելի լայն Արցախյան շարժմանը և «ազգային-ազատագրական» պատերազմին, ինչը հարմար դաշտ էր ստեղծում կրոնական քարոզի և նոր համայնքների ձևավորման համար [Գաբրիելյան, 2023, 199-201]: Հետխորհրդային շրջանում հայ ավետարանականները սկսեցին վերակառուցել իրենց համայնքները և վերահաստատել կրոնական ներկայությունը Շուշիի, Ստեփանակերտի, Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի շրջաններում և առանձին գյուղերում: Այս վերածննդին նպաստեցին կրոնական ազատության աճը, Ամերիկայի, Ֆրանսիայի, Կանադայի, Ավստրալիայի, Ռուսաստանի և այլ հայկական բողոքական համայնքների կողմից ուղարկված միսիոներական առաքելությունները, ինչպես նաև ավետարանական մի շարք բարեգործական կազմակերպությունների աջակցությունը: Վերակառուցվեցին եկեղեցիները, կազմավորվեցին նոր համայնքներ և վերստեղծվեցին կրոնական կրթական ծրագրեր՝ նշանավորելով ավետարանական կյանքի զգալի աշխուժացումն Արցախում:

Ի տարբերություն վերը ներկայացված նախորդ սակավաթիվ ուսումնասիրությունների, որոնք հիմնականում ընդգծում են բողոքականության տարածումը վաղ միսիոներական ջանքերի միջոցով [Ղուկազեանց, 1886; Ղանալանյան, 2010; Merguerian, 2000], այս հոդվածն ուսումնասիրում է բռնի տեղահանման անմիջական և զարգացող ազդեցությունները Արցախի ու Հայաստանյան բողոքական համայնքների վրա: Մինչև 2023 թվականը՝ Ադրբեջանի կողմից Արցախի բռնի տեղահանումը, յուրաքանչյուր քաղաքի կամ գյուղի բողոքական համայնք ուներ հստակ ձևավորված սահմաններ՝ ոչ միայն կրոնական, բայց նաև սոցիալական և տնտեսական փոխկապակցվածություն՝ մշտական անդամներով, տնային եկեղեցիներով և անդամների միջև սոցիալական ցանցային կապերով: 2023 թ. բռնի տեղահանումը հանգեցրեց նաև բողոքական կրոնական համայնքների սահմանների քանդմանն ու հավատացյալների կողմից հայաստանյան համայնքներում նոր՝ երևակայական սահմանների ձևավորմանը: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել, թե 2023 թ. Արցախի բռնի տեղահանումից հետո ինչու՞ և ինչպե՞ս են կառուցակցվում կրոնական երևակայական սահմանները, ինչու՞ և ինչպե՞ս են դրանք քանդվում և փոխկապակցվում իրար հայաստանյան բողոքական-կրոնական համայնքներում: Հոդվածի համար հիմք են հանդիսացել Հայաստանյաց Ավետարանական եկեղեցու և Ավետարանի հավատքի քրիստոնյաների ամբողջ եկեղեցու (Հիսուսականներ) ամսագրերը, պաշտոնական կայքէջերի հրապարակումները, ինչպես նաև իմ կողմից այս եկեղեցիներում իրականացված հարցազրույցները հովիվների, եկեղեցու անդամների և Արցախից տեղահանված հավատացյալների հետ:

Սահմանը, տեղահանությունը և հավատքի դերը: Պետությունների միջև ֆիզիկական սահմանները ուրվագծվում են տարբեր գիտական և իրավական շրջանակների միջոցով՝ ընդգրկելով աշխարհագրական, քաղաքական և սոցիալական հարթությունները: Ըստ Անդերսոնի և Օ'Դաուդի, սահմանները «սոցիալական կառուցվածքներ և ինստիտուտներ են, որոնք արտացոլում և ամրացնում են իշխանության, ռեսուրսների և հնարավորությունների տարբերությունները» [Anderson, O'Dowd, 1999, 598]: Ֆիզիկական սահմանները ծառայում են որպես պետական ինքնիշխանության շոշափելի գծեր, որոնք ուրվագծում են տարածքային սահմանները, որոնցում գործում են պետության օրենքներն ու կառավարումը:

Ադրբեջանի կողմից արցախահայերի բռնի տեղահանումը բազմաթիվ սոցիալ-մշակութային և հոգեբանական մարտահրավերներ առաջացրեց բնակչության շրջանում Հայաստանի սահմանը հատելու հարցում: Ինչպես նշում է Հայաստանյաց Ավետարանական եկեղեցու մարզային համայնքներից մեկի կիրակնօրյա պաշտամունքներին հաճախող արցախահայերից մեկը՝ «Ինձ համար սահմանն անցնելն իմ ամբողջ կյանքի ամենանվաստացուցիչ պահն է եղել, որ պետք է անձնագիրս տայի թուրքին ու սպասեի նրա որոշմանը, թե ես իմ երկրից դուրս գամ, թե՝ ոչ: Նույնիսկ պատերազմի պարտությունն այդքան նվաստացուցիչ չէր, որքան թուրքի դրոշի տակով անցնելը»: Մեկ այլ հավատացյալ էլ նշում է, որ «մինչև Հաքարիի կամուրջն անցնելը մեր փաստաթղթերը գցեցինք, որովհետև վախենում էինք, որ մեր անուն-ազգանունները կամ ինչ-որ բան կարող են թուրքերը հասկանան»: Այստեղ կարելի է օգտագործել Պիեր Բուրդյեի «խորհրդանշական բռնություն» հայեցակարգը, որը գերիշխանության և հարկադրանքի նուրբ ու հաճախ անտեսանելի ձև է, որը տեղի է ունենում ոչ թե ֆիզիկական, այլ մշակութային և սոցիալական միջոցներով [Bourdieu, 1991, 163-171]: Ադրբեջանական դրոշի և զինվորականների ռազմական ներկայության նկատմամբ վերաբերմունքն ավելի խորը պատմական, ինքնության և սոցիալ-մշակութային հիմքեր ունի, թեև դրանց ուսումնասիրությունը դուրս է այս հետազոտական հոդվածի շրջանակներից:

Հարկ է նշել, որ վտանգի, մահվան անխուսափելիության, աղետի ժամանակ հրաշքի, աղոթքների, հավատքի նկատմամբ պահանջարկն ավելանում է: Ինչպես նշում են բողոքական արցախցիները՝ «մենք մտածում էինք, որ Աստված մեզ հետ ա ու մենք պետք ա անցնենք սահմանը» կամ «սահմանն անցնելիս անդադար աղոթքներն էին, որ ամբողջ ընտանիքին, հարազատներին ողջ հասցրեցին Հայաստան»: Բալաքյանը ցույց է տալիս, որ 1915 թ. Հայոց Ցեղասպանության ժամանակ շատ հայեր մխիթարություն գտան իրենց քրիստոնեական հավատքի մեջ՝ աղոթելու և կրոնական ծառայությունների միջոցով [Balakian, 2009, 121]:

Մյուս կողմից պատերազմները, աղետները, դժբախտ դեպքերը հարմար դաշտ են ստեղծում կրոնական քարոզի համար: Կրոնական քարոզիչները հաճախ շեշտը դնում են հույսի, աստվածային պաշտպանության և ավելի լավ ապագայի խոստման թեմաների վրա՝ խորապես արձագանքելով նեղության մեջ գտնվողների կարիքներին: Ավելին, կրոնական պրակտիկայի համայնքային ասպեկտը ապահովում է աջակցության և համերաշխության ցանց: Համատեղ հավատքն ու ծեսերն առաջարկում են պատկանելության և ինքնության զգացում, որտեղ եկեղեցին դառնում է ոչ միայն պաշտամունքի վայր, այլև սոցիալական աջակցության և համայնքային

համախմբման կենտրոն [Merino, 2014, 595-612; Գաբրիելյան, 2023, 210-213]: Պատերազմը, տեղահանությունը «խտացնում է» համայնքի զգացողությունը, ընդլայնում սահմանները, ավելի կոնկրետ իմաստ հաղորդում «եղբայր/քույր» հասկացություններին, որոնք տեսանելի են դառնում շոշափելի օգնության և բարեգործության շնորհիվ: Համատեղ տառապանքների և փոխադարձ աջակցության պրակտիկան ամրապնդում է համայնքային կապերն ու հավաքական ինքնությունը՝ հիմք ստեղծելով պատերազմի և տեղահանության դժվարությունները հասկանալու և հաղթահարելու համար:

Բողոքական եկեղեցիների աստվածաբանական մեկնաբանությունը պատերազմի վերաբերյալ կարելի է հասկանալ «արդար պատերազմ» հասկացության միջոցով: Հռոմեացի վաղ քրիստոնեական աստվածաբան Սուրբ Օգոստինոս Երանելին, իր «Աստծու քաղաքը» գրքում խոսելով «արդար պատերազմի» մասին, նշում է՝ «որովհետև հակառակ կողմի սխալ գործելակերպն է, որ ստիպում է իմաստունին արդար պատերազմ վարել» [The works of Aurelius Augustine; M.A.; Blackburn-Smith, 2007, 18]: Հայկական բողոքական համայնքներում «արդար պատերազմի» հայեցակարգը էական դեր է խաղում հակամարտության կրոնական և ազգային շահերի միասնության համար: Մի կողմից բողոքական ուղղությունները դնում են բարու և չարի դուալիստական հայեցակարգը՝ պատերազմը ներկայացնելով չարի դեմ պայքար հանուն քրիստոնեական արժեքների, հավատքի պահպանման, մյուս կողմից առաջ են քաշում ազգային ու պատմական իրավունքը, հայերի՝ հայրենի հողում ապրելու իրավունքը՝ զուգահեռելով կրոնականը ազգայինի հետ: «Լեռնային Ղարաբաղը՝ պատմականորեն Արցախը, իրավական հիմքերով հայկական տարածք է, դարեր շարունակ ունեցել է իր հայկական իշխանությունը և մեծամասնաբար բնակեցված է եղել հայերով, հիմա էլ բնակեցված է Լեռնային Ղարաբաղի բնիկ հայերով: Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքը լեցուն է հայկական հազարամյա մշակութային, կրոնական, հոգևոր և ճարտարապետական ժառանգությամբ, որն արտահայտված է վեհաշուք եկեղեցիներով, հնամենի և զարմանահրաշ վանքերով, հազարավոր ձեռագործ խաչքարերով, անառիկ ու հոյակերտ բերդերով, ամրոցներով ու նախաքրիստոնեական քաղաքների մնացորդներով»,- գրված է ՀԱԵ կայքէջում:

Հակառակ պատերազմի մեկնաբանությանը՝ Արցախի կորստի վերաբերյալ աստվածաբանական բացատրությունը հղում է անում Աստծո նախախնամության գաղափարին: Ինչպես նշում է ՀԱԵ հովիվներից մեկը՝ «մենք գտնում ենք, որ սա անարդար էր, և Աստծո խոսքն ասում է վերջին օրերում, որ ազգը ազգի դեմ դուրս կելնի, թագավորը թագավորի դեմ, ազգի ներսում կռիվներ պիտի լինեն: Մենք բացատրում ենք, որ սա Աստծո կամքը չի, բայց Աստծո գիտությամբ է եղել: Անշուշտ Աստված իր արժանի դատաստանը կանի, արդարությունն Աստծունն ա»: Արցախցի հավատացյալներից մեկն էլ մեր զրույցի ժամանակ ասաց, որ «երբեք ոչ մի անգամ մտքովս չի անցել ասեմ՝ Տե՛ր, դու մեղավոր ես, դու թողեցիր: Ասել եմ, որ մեր մեղքերի համար, Տե՛ր ջան, դու մեր երկիրը վերցրեցիր: Հետո մտածում եմ Աստծո գործերն անքննելի են: Եթե հիմա չիմանանք, մահից հետո անպայման կիմանանք, թե ինչի համար մեզ տրվեց մեր հաղթանակը, հետո վերցվեց»: Կարևոր խնդիր է նաև այն, որ չնայած Հայաստանի սահմանը հատելը, որոշ մարդկանց համար արդեն փրկություն էր նշանակում, բայց ժամանակավոր բնակվելով Հայաստանի սահմանային շրջաններում՝ շատ արցախցիներ լքեցին այդ բնակավայրերը՝ ապահով չհամարելով այն: «Շատ-շատերը մեր սահմանամերձ գյուղերից գնացին,

կային օրինակ՝ Ազատամուտում ապրողներ, որ թողեցին, գնացին դեպի Երևան: Ասում էին՝ ընդեղից մենք փախել ենք, ըստեղ էլ ա սահման, վախ կա: Արցախի մեր համայնքի մեծ մասը Երևանում են ապրում»,- պատմում է արցախցի տեղահանվածների խնդիրներով զբաղվող ավետարանական սոց.աշխատողներից մեկը:

Բողոքական համայնքների ներսում երևակայական սահմանների ստեղծումը: Տեղահանումը հաճախ հանգեցնում է ինքնության վերակազմավորման, որտեղ անհատները պետք է նավարկեն նոր սոցիալական լանդշաֆտներում՝ միաժամանակ փորձելով պահպանել իրենց մշակութային ու կրոնական պրակտիկաները: Այս ենթագլխում ես փորձելու եմ ներկայացնել այն երևակայական/սոցիալական սահմանները, որոնք կառուցակցվում են բողոքական համայնքների ներսում արցախահայերի ու եկեղեցիների առանձին նախաձեռնությունների միջոցով: Այդպիսի երևակայական սահմաններ են մշակութային սովորույթները, լեզուն, հայրենակցական կազմակերպման ձևերը և այլն: 2023 թ. Արցախի օկուպացիայի հետևանքով արցախահայերի կրոնական համայնքները ցրվեցին. տեղահանումից հետո մի շարք արցախցիներ բնակություն են հաստատել կամ իրենց ազգականների ու երկար տարիներ Հայաստանում բնակվող բարեկամների տանը կամ նրանց հարևանությամբ, կամ էլ օգտվել են պետական ու բարեգործական տարբեր ծրագրերի կողմից տրամադրված կացարաններից, ինչի պատճառով էապես տուժել է լոկալ կրոնական-համայնքային կյանքը: Հայաստանի տարբեր մարզերում բնակություն հաստատած հավատացյալները այսօր փորձում են ինտեգրվել իրենց բնակության վայրերում գոյություն ունեցող ու ՀՀ անկախության տարիներից ձևավորված կրոնական համայնքներում: Այս պահին որոշ համայնքներում ստեղծվում են երևակայական սահմաններ, որոնք ժամանակի ընթացքում կարող են կամ ընդլայնել իրենց գործունեության դաշտը, կամ էլ փլուզվել՝ ավելի լայն հասարակությանը ինտեգրման արդյունքում:

- **Մշակութային սահմաններ.** Քլիֆորդ Գերցը ընդգծում է, որ «կրոնը ծառայում է որպես մշակութային խորհրդանիշների և պրակտիկաների շտեմարան», որն օգնում է ինքնության պահպանմանը տեղահանության ժամանակ [Geertz, 1973, 90]: 2023 թ.-ից հետո բողոքական տարբեր եկեղեցիների կողմից արցախահայերին նվիրված միջոցառումները, որոնք հաճախ ուղեկցվում են ժենգյալով հացի պատրաստման, շուշեցի երեխաների ասմունքի կամ այլ մշակութային առանձնահատկություններով, համայնքի ներսում մշակութային սահմանների ընդգծման լավագույն օրինակներից են [ՀԱԵ կայքէջ][1]: Սահմանների նման կառուցակցումը հնարավորություն է տալիս պահպանելու մշակութային պրակտիկաները արցախահայերի շրջանում, ինչպես նաև հանդիսանում է միջհամայնքային փոխշփումների հարմար դաշտ: Մյուս կողմից, կրոնական համայնքները կարծես իրենց ձեռքն են վերցնում նաև Արցախի ընդհանրացված մշակութային պրակտիկաների պահպանման որոշ գործառույթները, ինչպիսիք են՝ ժենգյալով հացը, բարբառը և այլն:

[1] Հայաստանյաց Ավետարանական եկեղեցու պաշտոնական կայքէջի իրադարձություններ բաժնում կան Արցախին ու արցախահայերին նվիրված մի շարք միջոցառումների մասին հրապարակումներ, https://www.eca.am/postcategory/21:

- **Լեզվական սահմաններ.** Լեզուն/ բարբառը նույնպես հանդիսանում է սահմանային նշիչ, որը տարբերակում է սոցիալական խմբերին։ Ջոշուա Ֆիշմանը ընդգծում է, որ լեզվի ընտրությունը և պրակտիկան արտացոլում են սոցիալական սահմանները՝ ծառայելով որպես էթնիկ և մշակութային ինքնության հիմնական բաղադրիչ [Fishman, 1999, 30]: Լեզվական-բարբառային տարբերությունների ընդգծումը և դրա պահպանումը ևս մեկ սոցիալական պրակտիկա է, որը հանդես է գալիս որպես ինքնության պահպանման ձևերից մեկը և քաջալերվում եկեղեցու կողմից։ Ինչպես նշում է ՀԱԵ հովիվներից մեկը՝ «Երբ Արցախ ենք ասում, մեր մտքով տներ ու վանքեր են անցնում, բայց միայն դա չէ, Արցախը ժողովուրդ է, Արցախը մշակույթ է, Արցախը լեզու է... Չամաչե՛ք ձեր լեզվով խոսել, չմոռանա՛ք այն... երբ դադարեք խոսել ձեր բարբառով, Արցախի մշակույթն էլ կդադարի գոյություն ունենալ...» [ՀԱԵ կայքէջ]: Մյուս կողմից լեզվական-բարբառային տարբերությունները հաճախ որոշակի խոչընդոտ են հանդիսանում համայնքի ավելի լայն փոխհարաբերությունների համար։ Ինչպես նշում են բողոքական համայնքների անդամները՝ «հիմնականում խնդիրներ չեն լինում, մարդիկ կան, որ գիտեն, որ ոչ բոլորն են Հայաստանում հասկանում իրենց բարբառը, բայց մարդիկ էլ կան, որ սկզբունքորեն միայն բարբառով են խոսում»։ Համայնքի մեկ այլ անդամ էլ պատմում է՝ «սկզբից շատ արցախցիներ, որոնք կարող էին գրական հայերենով խոսել, չէին խոսում, չէին ուզում, բայց հիմա խոսում են, էդ պատը քանդվեց։ Սկզբնական շրջանում իրենք մտածել են՝ եկել են, պետք ա գնան, բայց հիմա հակառակն են մտածում՝ եկել ենք ու պիտի մնանք»։ Փաստորեն, մի կողմից որոշ անդամների մոտ լեզվի-բարբառի կիրառումը հանդիսանում է ինքնության պահպանման կարևորագույն ցուցիչ ու երևակայական սահմանների գծման գործընթաց, բայց մյուս կողմից այդ սահմանների փլուզումը համընկնում է ավելի լայն համայնքային կյանքին ինտեգրմանն ու համայնքի ներսում սոցիալական հարաբերությունների աճին։
- **Համայնքում հայրենակցական սահմանների ձևավորումը.** Բացի վերը նկարագրված սահմաններից, հաճախ բողոքական տարբեր համայնքներում տեղի են ունենում լոկալ-հայրենակցական սահմանների կառուցակցման փորձեր։ Սահմանների նման կառուցման օրինակներ են ասկերանցի պատանիների միասին որոշ եկեղեցական տոներ նշելը, ժամանակ առ ժամանակ տարբեր հավաքները, Հիսունական եկեղեցիների կողմից ամեն ամիս մեկ օր միայն արցախցի հավատացյալների և նորադարձների համար հանդիպումներ, ճաշկերույթներ կազմակերպելը և այլն [Բարի լուր, Ապրիլ 2024, N3 (156), 15-16]: Ինչպես գրված է ՀԱԵ կայքէջում՝ «Մեկ տարի առաջ Քրիստոսի Հրաշափառ Հարության բարի լուրը Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցու Ասկերանի երիտասարդներն ու պատանիներն ավետում ու տոնում էին Արցախում: Մեկտեղ հավաքվելն ապրելակերպ էր, Տիրոջ ներկայության մեջ միաբանվելը՝ կենսական պահանջ: Մեկ տարի առաջ նրանք հարևաններ էին, համաքաղաքացիներ…իսկ հիմա Հայաստանի տարբեր քաղաքներից ու գյուղերից հավաքվել էին Երևանում, որպեսզի Տիրոջ պատվերի համաձայն՝ մեկտեղ հավաքվելը չթողնեն և գոնե տարին երկու անգամ՝ Սուրբ Ծնունդին ու Սուրբ Հարության տոնին ասկերանցիներով միաբանվեն, փառաբանեն Աստծուն, լսեն Նրա Բարի Լուրը»:

Հետաքրքրական է, որ խորհրդանշական սահմանների գծումը, ոչ միայն նախաձեռնվում է հավատացյալ արցախահայերի տարբեր շրջանակների կողմից, բայց նաև տեղի է ունենում հայաստանյան համայնքների ու եկեղեցու հոգևոր առաջնորդների ակտիվ մասնակցությամբ ու հովանավորչությամբ: Նման օրինակ է Արմավիրի ավետարանական եկեղեցու նոր ձևավորվող համայնքը, որը հիմնականում կազմակերպվում է արցախահայերի շուրջ՝ Արցախի ծառայողական խմբի ու հովվի գլխավորությամբ, որը նույնպես արմատներով Լեռնային Ղարաբաղից է: Համաձայն ՀԱԵ հովիվներից մեկի՝ «մենք Տավուշում եղած մոտ 20 հոգու ուղղորդեցինք, որ գնան Արմավիր, որտեղ արցախցիների կրոնական համայնք է ձևավորվում»:

Ամփոփելով պետք է նշել, որ մի կողմից երևակայական սահմանները հնարավորություն են տալիս ընդգծելու տարբեր խմբերի մշակութային առանձնահատկություններն ու պահպանել դրանք, սակայն մյուս կողմից սոցիալական այս սահմանները ենթակա են ժամանակի ընթացքում փոփոխության և կարող են փոխկապակցվել ավելի լայն հասարակական դինամիկայի հետ: Տեղահանված անհատների և հյուրընկալող բնակչության միջև սոցիալական փոխազդեցությունները կարող են լղոզել այս սահմանները: Միջհամայնքային միջոցառումները նպաստում են համայնքների անդամների միջև սերտ հարաբերությունների ստեղծմանը և հաճախ տարբեր ինքնություններ փոխկապակցում են՝ քանդելով խորհրդանշական սահմաններն ու ստեղծելով համայնքի ամբողջական միջավայրը: Հարկ է նշել, որ այս հոդվածի նյութերը վերաբերում են արցախցիների ելքի ու Հայաստանում հաստատվելու առաջին տարվա ուսումնասիրությանը, որն ինքնին «սահմանային» է, քանի որ շատերի համար այս պահի վիճակը ժամանակավոր է դիտվում: Այդուհանդերձ, այս հոդվածը լայն դաշտ է բացում հետագա հետազոտությունների համար՝ հիմք դնելով այս համայնքներում երկարաժամկետ ազդեցությունների և փոխակերպումների շարունակական ուսումնասիրություններին: Այն նաև տրամադրում է սկզբնական ազդեցությունների և հարմարվողականությունների համապարփակ վերլուծություն՝ հիմք ծառայելով ճգնաժամի ժամանակ կրոնական հարմարվողականության, ինտեգրման կամ տարանջատման դինամիկայի վերաբերյալ ապագա հետազոտությունների համար:

Գրականության ցանկ

Անտոնյան Յու. 2023, Կրոնական բազմազանությունը Հարավային Կովկասում ու Արևելյան Հայաստանում կայսերական ժամանակներում. ընդհանուր նկատառումներ, Կայսերականի և հետկայսերականի միջև. Հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները 20-րդ դարում, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 38:

Արցախի մշակույթի օր՝ Վանաձորում ՀԱԵ նախաձեռնությամբ, https://www.eca.am/post/1753?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR3i4JioVSI4pYKoTGPL4WPFHVSSTxezow9NGIC1-2yr2EdEkgb4aafjfKY_aem_pWYFIfNvj5qrKl7gSGJq8g:

Բարի լուր, Հայաստանի Ավետարանական հավատքի քրիստոնյաներ ամսագիր, Ապրիլ 2024, N3 (156), էջ 15-16:

Գաբրիելյան Լ. 2023, Բողոքական ու խարիզմատիկ շարժումների սոցիալական ու տարածքային տնտեսությունը հետխորհրդային շրջանում, Կայսերականի և հետկայսերականի միջև. Հայաստանյան կրոնական լանդշաֆտի զարգացումները 20-րդ դարում, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 199-201:

ՀԱԵ Ասկերանի պատանիներն ու երիտասարդները միասին են նշել Հարության տոնը, https://www.eca.am/post/1847?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR2xFFSCiWGU4K37CyQIb4Spt7lwJixPaLZyyj9bVj2pzRX_VjPcT1rqTB8_aem_lvwtItHaqS2nMpUi5DcW7w:

Համագումար՝ ՀԱԵ Արցախի ծառայողական կազմի և համայնքի անդամների մասնակցությամբ, https://www.eca.am/post/1735?fbclid=IwZXh0bgNhZW0CMTEAAR2zmjo66oP1zqLbY--GpZJ9WFPUiKBCkMBlYmxNbcbvUNxcAdD4YIB3Juc_aem_qSbHtCm12tdlfAQY3BVJ6w:

Ղազարյան Ա., Ռընե Լևոնյան 1999, Հայաստանյաց ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, էջ 185-199:

Ղանալանյան S. 2010, Հայ Բողոքականներ, «21-րդ դար», թիվ 4 (32), Երևան, էջ 40:

Ղանալանյան S. 2012, Հայ Ավետարանականների գործունեությունը Արցախում, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 8, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6640:

Ղուկասեանց Հ. 1886, Բողոքականութիին Կովկասու հայոց մէջ, պատմական նյութեր, Թիֆլիս, էջ 8-25:

Anderson, J., O'Dowd, L. 1999, Borders, Border Regions and Territoriality: Contradictory Meanings, Changing Significance. Regional Studies, 33(7), p. 598.

Balakian P. 2009, The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response. HarperCollins, p. 121.

Blackburn-Smith R. 2007, Contemporary American Protestant attitudes toward the war on terror: Authority, theology, and political beliefs, The Ohio state university, p. 18.

Bourdieu P. 1991, Language and symbolic power, Harvard University Press, pp. 163-171.

Fishman J. A. 1999, Handbook of Language and Ethnic Identity, Oxford University Press, p. 30.

Geertz C. 1973, The Interpretation of Cultures, Basic Books, p. 90.

Kaiser R. 1994, The Geography of Nationalism in Russia and the USSR, Princeton University Press, pp. 89-91.

Merguerian B. 2000, The Impact of the protestant West on the nineteenth century Armenian enlightenment, pp. 228-229.

Merino S. 2014, Social support and the religious dimensions of close ties, Journal for the Scientific study of religion, Vol. 53, No. 3, Wiley on behalf of Society for the Scientific Study of religion, pp. 595-612.

The works of Aurelius Augustine, Bishop of Hippo, edited by the Rev. Marcus Dods, M.A., Edinburg: T.&T. Clark, 38, George street.